

ՍՈՒՏ ՎԿԱՅՈՒԹԵԱՆ ՍԱՍԻՆ

Այս կանոնը կը գրենք անոնց համար, որոնք անաստուծաբար սուտ վկայութիւն կու տան: Այս մասին Աստուած խօսելով Մովսէսի հետ, Օրէնքին մէջ գրեց. «Սուտ մի՛ վկայեր»: (Ելք Ի. 13), ինչ որ մեծ անօրէնութիւն է:

Առաջին՝ ահեղ ու սոսկալի իրողութիւնը այն է, որ նշմարտութիւնը Աստուծոյ անունն է եւ ամէն բանի զարդն ու աշխարհի պայծառութիւնն է: Իսկ սուտ վկան աւերիչ ու կործանիչ է նշմարտութեան, որովհետեւ կը վկայէ ո՛չ իր տեսածին եւ ո՛չ ալ գիտցածին մասին:

Երկրորդ՝ ուրիշներու մեղքերու ընկեր կ'ըլլայ եւ զանոնք կը հաստատէ իրենց գործած մեղքին ու չարիքին մէջ եւ ինք սատանային բնակարանը կ'ըլլայ, ինչպէս Տէրը ըսաւ. «Ան որ սուտ խօսի, ինքն իրմէ կը խօսի սուտը»: «Ինքն իրմէն այն է, որպէս թէ Աստուած կ'ըսէ. «Սուտը իմս չէ, այլ՝ սատանային, եւ սատանան է անոր հայրը որ ծնաւ սուտը» (Յովի. Ը. 44) եւ ամէն սուտ վկայ մասնակից է սատանային:

Բոլոր ստախօնները, եթէ ետ չդառնան ու չապաշխարեն, սատանային հետ տանձանքի եւ կորուստի պիտի մատնուին, համաձայն այն խօսքին, թէ «Տէրը կը կորսնցնէ բոլոր սուտ խօսողները» (Սղ. Ե. 7): Ճշմարտախօս բերանը Ս. Հոգիին դուռն է, իսկ ստախօս բերանը դժոխիք դուռն է եւ դեւերու մուտք: Հետեւաբար, ձեր բերանը նշմարտութեան վարժեցուցէ՛, որպէսզի Ս. Հոգին բնակի ձեր մէջ:

ՍԱՍՈՒՆՔ



Սուրբերու աթիւններէն մասնիկ մը, փշրանք մը, երբ բարեպաշտական զգացումներով արծարեան փոքր տուփերու մէջ դրուած են կը կոչուին մասունք:

Անցեալին սովորութիւն չկար շարժական տուփերու մէջ պահելու սուրբերու աթիւններէն մասնիկներ: Նոյնիսկ փոքր ոսկորի բեկորներ կը թաղէնին եւ գերեզմանաբարերը կը պատրաստէն անոնց համար:

Այս երեւոյթը պատճառ դարձած է, որ զանազան սուրբեր մէկէ աւելի գերեզմաններ ունենան:

Աւելի ետք է, որ մարդիկ սկսան նախանշաւոր տուփեր շինել եւ անոնց մէջ պահել կամ խաչին մէջ զետեղել մասունքները: Նոյնիսկ վիզեն կախելու նպատակով փոքր տուփիկներ պատրաստած են անոնց մէջ ամփոփելու համար սուրբերուն մասունքները:

Այսօր մեր բոլոր եկեղեցիներուն մէջ Ս. Սեղանի բազմոցը զարդարող մեծ թէ փաքր զանազան մասունքներ կան, նախանշաւոր թէ պարզ տուփերուն մէջ, որոնք մեր բարեպաշտ ժողովուրդի պաշտամունքին արժանացած են:



ՅՈՒ ԽՈՍՔ ԻՆ ՈՅԵՐՈՒՄ ՃՐԱԳ Է ՈՒ ՀԱՅԻՆԵՐՈՒՄ ԼՂՅԱ
(Սղ.119.105)

ԺԶ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 29 ՅՈՒՆԻԿՈՒՐ 2023

ԹԻՒ 5

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱՑԱՑԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես. 61.10-62.9: Բ. ՏԱ. 2.15-26: ՅԻ. 6.15-21

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԱՌԱՋԱՒՈՐԱՑ ՊԱՀՈՑ

ԱԽԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ 6.15-21

Յիսուս երբ գիտցաւ, թէ պիտի գան զինք բռնութեամբ թագաւոր ընելու, դարձեալ լեռը ելաւ, առանձինն:

Երեկոյեան, Յիսուսի աշակերտները լիճին եզերքը իջան եւ նաւակ մտնելով սկսան երթալ լիճին դիմացի կողմը, դէպի Կափառնաում: Երբ մթնցաւ, տակաւին Յիսուս իրենց չէր եկած: Լիճը զօրաւոր հովէն կ'ալեկոծէր:

Աշակերտները հազիւ հինգ կամ վեց քիլոմետր նաւարկած էին, երբ տեսան Յիսուսը, որ լիճին վրայէն քալելով կը մօտենար նաւակին: Բոլորը սարսափիեցան: Յիսուս ըսաւ անոնց.- «Ես եմ, մի՛ վախնաք»:

Անոնք կ'ուզէին զինք նաւակին մէջ առնել, բայց արդէն նաւակը հասաւ այն տեղը, ուր կ'երթային:

ՀԱՅՐԵՐՈՒ ԽՈՍՔԵՐԵՆ ԱՍՏՈՒԱՑԱՇՈՒՆՉԻ ՍԱՍԻՆ

«Ճշմարտութեան հասնելու ամենայուսալի շահիդը Սուրբ Գիրքի ընթերցանութիւնն է, որովհետեւ այստեղին է, որ կը գիտնանք, թէ ինչ պէտք է ընել եւ ինչ պէտք չէ ընել: Այստեղ կարծէք վաղուց ննջած սուրբ մարդիկ յարութիւն կ'առնեն իրենց վեհ կեանքով, եւ ճամբայ ցոյց կու տան անոնց՝ որոնք կը կամենան իրենց բարի օրինակին հետեւիլ: Ահա թէ ինչու, իւրաքանչիւր անձ, որ կը տկարանայ իր պարտականութեանց կատարման մէջ, Սուրբ Գիրքը ընթերցելով՝ կրնայ զօրանալ: Միայն թէ խորհուրդ կու տամ, որ ընթերցանութիւնը թող աղօքքով առաջնորդուի» (Բարսեղ Կեսարացի):

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ

Նարար, 28 Յունուարին տօնն է Գրիգոր Աստուածաբանին: Ուստի եկեմիանարար ծանօթանանք սուրբին:

Եկեղեցւոյ գերագոյն վարդապետներէ մին է Գրիգորը: Կապադովկիոյ Նազիանզ քաղաքէն էր: Որդին էր հեթանոս հօր եւ քրիստոնեայ մօր եւ այս վերջինին ջանենվ կանուխ ստացաւ քրիստոնէական դաստիարակութիւն: Յիսուն տարեկանին հայրն ալ մօրը ջանեմերով դարձաւ քրիստոնեայ եւ մկրտուեցաւ: Նազիանզու եպիսկոպոսը երբ մեռաւ, Գրիգորիս անունով մէկը կոչուեցաւ նոյն արոռին եւ ձեռնադրութիւն ստացաւ Կեսարիոյ միեւնոյն եպիսկոպոսապետէն: Գրիգոր Արքէնքին մէջ իր ուսմանց ընթացքը աւարտել ետք Կ. Պոլսոյ ճամբով դարձաւ իր հայրենիքը, միշտ ինքոյնին նուիրելով հոգեւոր պարագաներու կամացութեամբ, դարձեալ հակառակութիւն յարուցուեցաւ իր դէմ, եւ փոխանակ իրեմ՝ Կ. Պոլսոյ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Մաքսիմոս Աղեքսանդրացի: Բայց ժողովուրդը չհանդուրժեց այս անիրաւութեան, եւ բուռն քափով պաշտպանեց Աստուածաբանը: 380-ին երբ Թէոդոս կայսրը Կ. Պոլիս դարձաւ պատերազմներէն, դարձեալ զօրացաւ Գրիգորի դիրքը: Յաջորդ տարին, Կ. Պոլսոյ Տիեզերական ժողովին մէջ հաստատուեցաւ եւ յայտարարուեցաւ իր պատրիարքութիւնը: Սակայն կարն ժամանակ ետք յաշաղկութեան երեսէն, հարկադրուեցաւ հրաժարի վերջապէս մայրաքաղաքի եպիսկոպոսական արոռին եւ Նազիանզի մօս, Արիագոն գիւղին մէջ ապրեցաւ առանձնական կեանք մը, ինքոյնին նուիրելով եկեղեցական գրականութեան, եւ մեռաւ 389 թուականին: Գրիգորի գործերը բազմահազար են: Այս գործերէն կարեւոր մասը բարգմանուած է հայերէնի:

Գրիգոր իր մօրը մահէն ետք քաշուեցաւ Խաւրացւոց Սելեկիա քաղաքը, Ա. Թէկոյի եկեղեցին: Այդ միջոցին Քրիստոսի եկեղեցին ծանր տագնապ մը կ'անցընէր մասնաւրաբար Արեւելքի մէջ, ուր կոստանդիանոսի մահէն վերջ դարձեալ զօրացած էր Արիոսի աղանդը, եւ մայրաքաղաքին հոգեւոր կեանքը գրեթէ բոլորովին անոնց ազդեցութեան տակ էր: 397-ին, Անտիոք գումարուած եպիսկոպոսաց ժողով մը նկատի առնելով այս կացութիւնը, ստիպողարար յանձնարարեց Գրիգորի՝ Կ. Պոլիս երթալ եւ ուղղափառութիւնը պաշտպանելու համար իր կարելին ընել: Անվարան համա-

կերպեցաւ անիկա այս յանձնարարութեան, եւ կուրծք տալով ամէն կերպ հակառակութեան՝ զորս աղանդաւրները յարուցին իր վրայ, յաջողեցաւ խորտակել անոնց զօրութիւնը, իր բարձրօրէն համոզիչ եւ պայծառ վարդապետութեամբ արժանանալով աստուածաբան տիտղոսին: Արիոսանեները, Մակեդոնիաները, Սարքիսաները եւ ուրիշ աղանդները, ամէնքն ալ սխանչացան իր պերճախօսութենէն: Ամէն կողմ տարածուեցաւ իր համբաւը: Հերոնիմոսի նման գիտուն գլուխ մը պատի համարեց աշակերտել իրեն: Այն ատեն մեծամասնութիւնը միացաւ եւ իրեն հետ ունենալով Աղեքսանդրիոյ Պետրոս պատրիարքի գրաւոր հաւանութիւնը, մայրաքաղաքին եպիսկոպոս կարգեց զինք: Բայց ժիշ ետք, նոյնիսկ կարգ մը ուղղափառներու կամացցութեամբ, դարձեալ հակառակութիւն յարուցուեցաւ իր դէմ, եւ փոխանակ իրեմ՝ Կ. Պոլսոյ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Մաքսիմոս Աղեքսանդրացի: Բայց ժողովուրդը չհանդուրժեց այս անիրաւութեան, եւ բուռն քափով պաշտպանեց Աստուածաբանը: 380-ին երբ Թէոդոս կայսրը Կ. Պոլիս դարձաւ պատերազմներէն, դարձեալ զօրացաւ Գրիգորի դիրքը: Յաջորդ տարին, Կ. Պոլսոյ Տիեզերական ժողովին մէջ հաստատուեցաւ եւ յայտարարուեցաւ իր պատրիարքութիւնը: Սակայն կարն ժամանակ ետք յաշաղկութեան երեսէն, հարկադրուեցաւ հրաժարի վերջապէս մայրաքաղաքի եպիսկոպոսական արոռին եւ Նազիանզի մօս, Արիագոն գիւղին մէջ ապրեցաւ առանձնական կեանք մը, ինքոյնին նուիրելով եկեղեցական գրականութեան, եւ մեռաւ 389 թուականին: Գրիգորի գործերը բազմահազար են: Այս գործերէն կարեւոր մասը բարգմանուած է հայերէնի:

ՀՈՎԵՒՈՐ ԴԱՏ ԳԱՄ

ԻՆՉՈՒ «ՄԵՐ ԿԵԱՆՔԸ ՅԱՆՁՆԵԼ ՔՐԻՍՏՈՍԻ»

Յանձնելու համար մեր կեանքը Քրիստոսի, նախ պէտք է անդրադանալ, որ կորսուած վիճակի մէջ կը գտնուինք եւ կարիքը ունինք փըրկութեան: Անդրադանալուն պէտք է ընկերանայ փափաքը՝ անկեղծ ու սրտաբուխ փափաքը: Երբեմն Յիսուսի դառնալու մեր փափաքը յանկարծ կրնայ գօրանալ: Ասկիս Սուրբ Հոգին մեր սրտերէն ներս տարած աշխատանքին արդիւնքն է: Երբ նման փափաք արքնայ մեր մէջ, իսկոյն ծնրադրենք եւ ըսենք. «Տէ՛ր Յիսուս, ես քեզի պէտք ունիմ, որպէսզի կարենամ իմ այս վիճակէս դուրս գալ: Կը խստովանիմ մեղքերս եւ անձս իր ամրող տկարութիւններով ու մեղքերով ուղքերու առջեւ կը դնեմ: Եկո՛ր եւ քագաւորէ կեանքին մէջ: Ասկէ ետք դուն եղիք իմ առաջնորդս, կ'աղաչեմ քեզի»:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՉԸ

«Եթէ վարժութիւն դարձնենք մնայուն կերպով Աստուածաշունչ կարդալը, ի վիճակի կ'ըլլանք հասնելու մեր փրկութեան, կը նանշնանք թէ ուղիղ դաւանութիւնը եւ թէ առաքինի վարքը: Նոյնիսկ եթէ մէկը ըլլայ խիստ յամառ, խստապարանց եւ ծոյլ, եւ նոյնիսկ եթէ անցեալին ոչ մէկ օգուտ քաղած է Աստուածաշունչի ընթերցումէն, կու գայ ժամանակ սակայն, երբ կը սկսի պտուղ տալ, եթէ յարատեւէ ընթերցման մէջ»:

(Յովիան Ոսկեբերան)

ԵԹԵ ԿԱՄ ԵՐԲ Կ'ՈՒՁԵՄ...

ՓՈՐՁՈՒԹԵԱՆՑ ՄԷԶ
ՅԱՐԱՏԵՒԹԻՒՆ՝ ՋՐԻՍՈՍԻ
ՕՐԻՆԱԿՈՎ
ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ՆԱՍԱԿԵՆ
12.1-7

Ուրեմն մենք ալ, որ այսքան բազմաթիւ վկաներով շրջապատուած ենք, վասնենք ամէն խոշընդուտ եւ մէկ կողմ ձգենք մեղքը, որ մեզ դիւրա կը պաշարէ եւ համբերատարութեամբ պայքարինք մեզի ներկայացող փորձութիւններուն դէմ: Մեր աչքերը յարենք Յիսուսի, մեր հաւատքի հիմնադիրին ու կատարեկազործողին, որ գիտնալով, թէ ինչ ուրախութիւն կատար կարութիւնը արդիւնքն է: Երբ նման փափաք արքնայ մեր մէջ, իսկոյն ծնրադրենք եւ ըսենք. «Տէ՛ր Յիսուս, ես քեզի պէտք ունիմ, որպէսզի կարենամ իմ այս վիճակէս դուրս գալ: Կը խստովանիմ մեղքերս եւ անձս իր ամրող տկարութիւններով ու մեղքերով ուղքերու առջեւ կը դնեմ: Եկո՛ր եւ քագաւորէ կեանքին մէջ: Ասկէ ետք դուն եղիք իմ առաջնորդս, կ'աղաչեմ քեզի»:

Որպէսզի երբեք չյուսալքուիք եւ չտկարանաք, մտաբերեցէք, թէ Յիսուս ինչպիսի համբերութեամբ կրեց մեղքաւրներու հակառակութիւնները: Դուք տակաւին ձեր արիւնը բափելու չափ դիմադրութիւն ցոյց չտուիք մեղքի դէմ պայքարին մէջ:

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ՆԱՍԱԿԵՆ 12.5-9

... Ուստի համբերութեամբ ընդունեցէք Աստուած խրատը գիտնալով, որ հօր մը պէս կը վարուի ձեզի հետ: Կա՞յ զաւակ մը, որ իր հօրմէն յանդիմանութիւններուն կը քարութիւն առջեւ կը դնեմ: Եկո՛ր եւ քագաւորէ կեանքին մէջ: Ասկէ ետք դուն եղիք իմ առաջնորդս, կ'աղաչեմ քեզի»: